ՀԱՇՏԵՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ

Երկիմաստության կիրառումը միջնորդավորված համաձայնագրերում. հայ-թուրքական արձանագրությունների վերլուծություն

ՍՈՒՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Տաֆտս համալսարան, Իրավունքի և Դիվանագիտության Ֆլետչերի դպրոց, ԱՄՆ

Հոդվածի նպատակն է ուսումնասիրել երկիմաստության հայեցակարգը դիվանագիտական խոսույթում, միջնորդավորված համաձայնագրերի համատեքստում՝ հայ-թուրքական հարաբերությունների դեպքի հիման վրա: Ուսումնասիրվում է Հայաստանի և Թուրքիայի միջև դիվանագիտական լեզվի զարգացման ընթացքն արդի բանակցային փուլում, որը սկսվել է 1992 թվականից տարվող երկկողմ բանակցություններով ու պաշտոնական հայտարարություններով և ավարտվել դիվանագիտական հարաբերությունների հաստատման ու զարգացման վերաբերյալ 2009թ. հոկտեմբերի 10-ին Շվեյցարիայի կառավարության միջնորդությամբ նախաստորագրված արձանագրություններով: Ներկայացվում է, թե ինչպես են միջնորդներն օգտագործում երկիմաստությունը՝ որպես տեքստի միջոցով կողմերի հաշտեցման գործիք, և այն հետևանքները, որոնց ապագայում կարող է հանգեցնել երկիմաստության պահպանումը: Քննարկվում է, թե դիվանագիտական լեզվի զարգացումն ինչպես է ազդել կողմերի համար հնարավոր համաձայնության գոտու ձևավորման վրա, մասնավորապես, տարածաշրջանում քաղաքական և աշխարհաքաղաքական նոր իրողությունների տեսանկյունից:

Բանալի բառեր

Հայ-թուրքական հարաբերություններ, բանակցություններ, միջնորդություն, հնարավոր համաձայնության գոտի

Նախաբան

2009 թվականի հոկտեմբերի 10-ին Ցյուրիխ քաղաքում Հայաստանի արտաքին գործերի նախարար Է. Նալբանդյանը և նրա թուրք գործընկեր Ա. Դավութօղլուն արձանագրություններ նախաստորագրեցին՝ դիվանագիտական հարաբերությունների հաստատման և հայ-թուրքական սահմանի բացման վերաբերյալ: Ռուսաստանի, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի և Շվեյցարիայի դերակատարությունը չափազանց կարևոր էր արձանագրությունների նախապատրաստման և նախաստորագրման գործում:

Արձանագրությունների նպատակը երկկողմ հարաբերությունների հաստատումն ու զարգացումն էր: Դրանցով նախատեսվում էր հստակ ժամանակացույց և քայլերի հաջորդականություն: Արձանագրությունները պետք է վավերացվեին երկու պետությունների Խորհրդարանների կողմից:

Կողմերը պարտավորվում էին վավերացումից հետո երկու ամսվա ընթացքում բացել ընդհանուր սահմանը և արտաքին գործերի նախարարների գլխավորությամբ ստեղծել աշխատանքային խումբ՝ միջպետական հանձնաժողովի և ենթահանձնաժողովների աշխատանքները կազմակերպելու համար: Այդուհանդերձ, չնայած հստակ ժամանակացույցին և քայլերի հաջորդականությանը, արձանագրություններում գոյություն ունեին որոշ երկիմաստություններ, ինչը լուրջ մտահոգություններ էր առաջացրել Հայաստանում, Թուրքիայում ինչպես նաև հայկական Սփյուռքում և Ադրբեջանում:

Արձանագրություններով երկու երկրները նախատեսում էին «իրականացնել երկու ժողովուրդների միջև փոխվստահության վերականգնմանն ուղղված պատմական հարթության երկխոսություն, այդ թվում՝ պատմական փաստաթղթերի և արխիվների անկողմնակալ գիտական ուսումնասիրություն՝ առկա խնդիրների սահմանման ու առաջարկների ձևակերպման նպատակով»[1]: Սփյուռքահայերի շրջանում կարծիք կար, որ նման ձևակերպումը կարող է կասկածի տակ դնել Հայոց Ցեղասպանության փաստը: Այդ պատճառով Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանն ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Լիբանանի և այլ երկրների հայ համայնքների հետ հանդիպման նպատակով մեծ շրջագայություն իրականացրեց՝ ներկայացնելու համար արձանագրությունները և հայ-թուրքական հարաբերությունների հնարավոր զարգացումը: Շրջագայության ընթացքում տեղի ունեցան բողոքի ակցիաներ, ցույցեր ու հանրահավաքներ և ընդհանուր առմամբ հայկական սփյուռքը բավական սառը ընդունեց Հայաստանի նախագահին: Միաժամանակ, հայ-թուրքական հարաբերությունների և Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացների

[1] Protocol on Development of Relations Between the Republic of Turkey and Republic of Armenia, October 10, 2009, http://www.mfa.gov.tr/data/DISPOLITIKA/türkiye-ermenistan-ingilizce.pdf (29.03.2017).

համադրման վերաբերյալ թուրք պաշտոնյաների բազմաթիվ հայտարարություններ լրացուցիչ խթան հանդիսացան դժգոհության խորացման համար: Վրդովմունքի պատճառ էր նաև արձանագրությունների լեզվում որոշ երկիմաստության առկայությունը, որը թեև Լեռնային Ղարաբաղի հակամարտության վերաբերյալ որևէ դրույթ չէր պարունակում, այնուամենայնիվ պարունակում էր մի շարք անընդունելի հղումներ՝ այլ պետությունների ներքին գործերին չմիջամտելու սկզբունքների, տարածաշրջանային և միջազգային վեճերի և հակամարտությունների խաղաղ կարգավորման վերաբերյալ և այլն:[2] Մեկ այլ պատճառ, որի համար Հայաստանում արձանագրությունները խիստ քննադատության ենթարկվեցին, այն էր, որ թեև Հայաստանի իշխանությունները շարունակաբար հավաստիացնում էին, որ հայ-թուրքական երկկողմ հարաբերությունների կարգավորումը պետք է տեղի ունենա առանց նախապայմանների, դրա մասին տեքստում նշված չէր: Թուրքիայի և հատկապես Ադրբեջանի համար նույնպես արձանագրությունների լեզուն մի շարք մտահոգությունների տեղիք տվեց՝ Լեռնային Ղարաբաղի հարցի վերաբերյալ կետի բացակայության պատճառով: Այնուամենայնիվ, երբ Թուրքիայի արտաքին գործերի նախարար Դավութողլուին հարցրեցին, թե արդյո՞ք Թուրքիան վերջնականապես փոխել է իր քաղաքականությունը և կբացի հայ-թուրքական սահմանն առանց որևէ պայմանի, Թուրքիայի արտաքին գործերի նախարարը հայտարարեց, որ «Թուրքիան զուգահեռ ուղիներ է նախատեսում և առանց տարածաշրջանի համապարփակ հաշտեցման հնարավոր չի համարում պահպանել կարգավորման գործընթացը»:[3] Իր դաշնակից Ադրբեջանի մտահոգությունները մեղմելու համար Թուրքիան խոստացավ, որ արձանագրությունները որևէ կերպ վնաս չեն հասցնի Ադրբեջանի ազգային շահերին: Սակայն Թուրքիան ամբողջությամբ չէր բացառում սահմանը բացելու հնարավորությունը՝ նախքան Հայաստանի և Ադրբեջանի միջև միջանկյալ լուծման հասնելը:[4]

---

[2] Նույն տեղում:

[3] Turkey, Armenia One Step Closer to Open the Border; *The Hurriyett Daily News*, September 1, 2009, http://www.hurriyetdailynews.com/n.php?n=turkey-armenia-one-step-closer-to-the-border-2009-09-01 (12.04.2015).

[4] Նույն տեղում:

2014թ. ՄԱԿ-ի 69-րդ նստաշրջանում Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը պատասխանեց թուրքական կողմի՝ արձանագրությունները չվավերացնելու մեղադրանքին, հայտարարելով. «Հայաստանը երբևէ Հայոց ցեղասպանության ճանաչումը նախապայման չի դարձրել Հայաստան-Թուրքիա երկկողմ հարաբերությունների կարգավորման համար: Հայտնի է, որ պաշտոնական Երևանի նախաձեռնած՝ Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացը հասավ մինչև Ցյուրիխյան արձանագրությունների ստորագրում: Այդ արձանագրություններն արդեն տարիներ շարունակ դարակում են՝ սպասելով Թուրքիայի խորհրդարանի վավերացմանը: Պաշտոնական Անկարան բացահայտ հռչակում է, որ կվավերացնի այդ արձանագրությունները միայն, եթե Լեռնային Ղարաբաղը՝ Ազատ Արցախը, հայերը հանձնեն Ադրբեջանին: Հայաստանում և Արցախում նման նախապայմաններին հասարակ մարդիկ շատ հաճախ արձագանքում են շատ պարզ. «Գրողի ծոցը վավերացնեք»: Ժողովրդական լեզվով արտահայտված այս երկու բառի մեջ մի ողջ ազգի դարավոր պայքարն է խտացած, որ ուրիշի հայրենիքի վրա առուծախ անողներին անառարկելիորեն բացատրում է՝ Հայրենիքը սուրբ է, ու ձեր առուծախը հեռու տարեք մեզնից: Ահա նման պայմաններում է, որ այսօր պաշտոնական Երևանը լրջորեն քննարկում է հայ-թուրքական արձանագրությունները խորհրդարանից հետ կանչելու հարցը:[5]

Քանի որ այսօր արձանագրություններն արդեն իսկ երկու պետությունների քաղաքական օրակարգում չկան, առավել հեշտ է վերլուծել դրանց տեքստերում առկա երկիմաստությունը:

Սույն ուսումնասիրության նպատակն է անդրադառնալ այն երկիմաստ ձևակերպումներին, որոնք բանակցողներն օգտագործել են արձանագրությունների տեքստերը կազմելիս՝ կողմերին հաշտեցնելու և մեկ տեքստի միջոցով նրանց շահերը հաշվի առնելու համար: Ուսումնասիրությունը կանդրադառնա արձանագրություններին՝ որպես հաշտեցման գործիք, ինչպես նաև առկա ձևակերպումներին,

[5]**Serzh Sargsyan**, The Speech of the President in the UNGA session, http://www.president.am/en/press-release/item/2014/09/24/President-Serzh-Sargsyan-New-York-speech/(08.01.2017).

որոնք նպատակ էին հետապնդում հիմք ստեղծել երկիմաստ մեկնաբանությունների համար: Այն նաև կանդրադառնա բառերի և հասկացությունների ընտրությանը, ինչպես նաև այն գործոններին, որոնք հիմք են հանդիսացել այս կամ այն ձևակերպումն ընտրելու համար, որպեսզի դրանք անընդունելի լինեն կողմերի համար:[6]

Ուսումնասիրությունը նաև կանդրադառնա կողմերի բանակցային համաձայնագրի լավագույն տարբերակներին (BATNA) և այն հարցին, թե ինչպես այս արձանագրությունները կարող էին ազդել տարածաշրջանի աշխարհաքաղաքական զարգացումների վրա:

Հակամարտության պատմությունն ու ֆուտբոլային դիվանագիտությունը

Հայ-թուրքական հարաբերությունները մշտապես բնութագրվել են որպես սառը, անվստահության քողով պարուրված և մշտապես կրել են լարված բնույթ: Դրա պատճառը եղել է հարաբերություններում մի շարք չլուծված խնդիրների առկայությունը, մասնավորապես Հայոց Ցեղասպանության փաստը, որը Թուրքիան մշտապես հերքել է, հետապնդելով նաև այն թուրքերին, ովքեր հանդգնել են բարձրաձայնել խնդիրը:[7] Հարաբերությունների ամենալարված պահը դարձավ 1993 թվականը, երբ Թուրքիան ի աջակցություն իր դաշնակից Ադրբեջանի, փակեց Հայաստանի հետ սահմանը՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության պատճառով:[8] Հայաստանի և Թուրքիայի միջև լարվածությունը շարունակվեց նաև այն ժամանակ, երբ Հայաստանը շրջանցող մի շարք ենթակառուցվածքային նախագծեր կառուցվեցին, օրինակ Բաքու-Թբիլիսի-Ջեյհան խողովակաշարը և Բաքու-Թբիլիսի-

---

[6] **Druckman D.,** Negotiating In the International Context, *Zartman I.W.,Rasmussen J.L. (eds.), Peacemaking in International Conflict: Methods and Techniques,* Washington DC: United States Institute of Peace Press, pp. 81-124, 1997.

[7] Turkey: Article 301 is a Threat to Freedom of Expression and must be repealed now, Public Statement, Amnesty International, December 1, 2005, http://www.amnestyusa.org/document.php?lang=e&id=ENGEUR440352005 (08.10.2014).

[8] Turkey, Armenia to Sign Peace Agreement, *CNN,* October 10, 2009, http://www.cnn.com/2009/WORLD/europe/10/09/turkey.armenia.peace/index.html (21.08.2016).

Կարս[9] երկաթգիծը, ինչպես նաև Հայաստանը որոշեց վերագործարկել Թուրքիայի սահմանից 16 կմ հեռավորության վրա գտնվող ատոմակայանը[10]:

Հայ-թուրքական հարաբերություններում քաղաքական հազվադեպ շփումների շարքում կարելի է առանձնացնել Թուրքիայի վարչապետ Էրդողանի 2005թ. նամակը Հայաստանի նախագահ Ռոբերտ Քոչարյանին, որտեղ նա առաջարկում էր 1915թ. Իրադարձությունների ուսումնասիրման համար պատմաբանների և փորձագետների հանձնաժողով ստեղծել՝ ոչ միայն Թուրքիայի և Հայաստանի, այլ նաև երրորդ երկրների արխիվներում ուսումնասիրություններ կատարելու և դրանց արդյունքները միջազգային հանրությանը ներկայացնելու նպատակով:[11] Քոչարյանը պատասխան առաջարկն արեց, նշելով, որ հարկավոր է առանց նախապայմանների դիվանագիտական հարաբերություններ հաստատել, և միայն այդ համատեքստում ստեղծել միջկառավարական հանձնաժողով երկու ժողովուրդների միջև առկա խնդիրներն ուսումնասիրելու և դրանց լուծում գտնելու նպատակով:[12] Իհարկե այդ նամակագրությունը որևէ արդյունք չտվեց:[13]

Սերժ Սարգսյանի նախագահությունը հայ-թուրքական հարաբերությունների համար նոր հեռանկարներ բացեց: 2008 թվականին

---

[9] **Starr S. F., Cornell S.E.(edt.),** The Baku-Tbilisi-Ceyhan Pipeline: Oil Window to the West, Central Asia-Caucasus Institute & Silk Road Studies Program – A Joint Transatlantic Research and Policy Center, Johns Hopkins University, 2005, https://www.silkroadstudies.org/resources/pdf/Monographs/2005_01_MONO_Starr-Cornell_BTC-Pipeline.pdf (17.01.2017).

[10] Nuclear power in Armenia, *World Nuclear Association,* October 2009, http://www.world-nuclear.org/info/inf113.html (03.02.2017).

[11] Armenia-Turkey: The Great Debate, 2009; *European Stability Initiative,* http://www.esiweb.org/index.php?lang=en&id=322&debate_ID=2&slide_ID=1(21.08.2016).

[12] Նույն տեղում:

[13] 1915թ. իրադարձությունների անկախ երրորդ կողմի փորձաքննությունը նախաձեռնել է 2002թ. «հաշտեցման հանձնաժողովը», որն իրենից ներկայացնում է մի շարք հայտնի հայերի և թուրքերի խումբ: 2003թ. փետրվարին հրապարակված զեկույցում Նյու Յորքի Անցումային արդարադատության միջազգային կենտրոնը (ICTJ) եզրակացրեց, որ հայերի սպանություններն ու տեղահանությունները «ներառում են Ցեղասպանություն հանցագործության բոլոր տարրերը», ինչպես սահմանված է ՄԱԿ-ի կոնվենցիայով, http://www.ictj.org/images/content/7/5/759.pdf (12.04.2015).

Ռուսաստանի հայկական սփյուռքի ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ Սերժ Սարգսյանը հանդես եկավ աննախադեպ հայտարարությամբ՝ հրավիրելով Թուրքիայի նախագահին այցելելու Հայաստան, դիտելու Հայաստանի և Թուրքիայի ազգային հավաքականների միջև ֆուտբոլային հանդիպումը, որի պատճառով էլ գործընթացը սկսեց կոչվել «Ֆուտբոլային դիվանագիտություն» և Հայաստանն ու Թուրքիան սկսեցին պաշտոնական բանակցություններ՝ երկկողմ հարաբերությունների կարգավորման նպատակով:[14]

Իրականում հայ և թուրք դիվանագետների միջև արդեն ամիսներ շարունակ տեղի ունեցող գաղտնի բանակցությունների արդյունքում հայ-թուրքական մերձեցման գործընթացը միանգամից դարձավ տեղական և միջազգային ԶԼՄ-ներում բուռն քննարկումների առարկա: Միաժամանակ, երկու պետությունների պաշտոնյաները խոստովանում էին, որ երկու երկրները երբեք այսքան մոտ չեն եղել հարաբերությունների վերջնական կարգավորմանը, որքան այդ ժամանակ:[15] Ըստ Թուրքիայի արտգործնախարար Ահմեդ Դավութօղլուի, այդ գործընթացն ամբողջությամբ համապատասխանում էր թուրքական կառավարության «Զրո խնդիր հարևանների հետ» քաղաքականությանը:[16] Այդուհանդերձ մերձեցման «գնի» վերաբերյալ լուրջ քննարկումներ կային Հայաստանում և Սփյուռքում, քանի որ պաշտոնյաների հայտարարությունները հաշտեցման գործընթացի վերաբերյալ բավականին հակասական էին: Մինչ հայկական կողմը խոսում էր առանց նախապայմանների հարաբերությունների հաստատման մասին,[17] թուրք պաշտոնյաները պնդում էին, որ հայ-թուրքական սահմանը կարող է բացվել միայն այն բանից հետո, երբ

---

[14] Armenia-Turkey: The Great…. նշվ. աշխ.:

[15] Turkey, Armenia One Step Closer to Open the Border, *Hurriyett Daily News*, September 1, 2009; available from http://www.hurriyetdailynews.com/n.php?n=turkey-armenia-one-step-closer-to-the-border-2009-09-01 (12.04.2015).

[16] Armenia-Turkey: The Great…, նշվ. աշխ.:

[17] Interview of the President of Armenia Serzh Sargsyan to BBC correspondent Gabriel Gatehouse, August 31, 2009, http://www.president.am/events/press/eng/?id=33 (22.08.2016).

Հայաստանը «վերականգնի Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը» և հրաժարվի «պատմությունը խեղաթյուրելու» փորձերից:[18]

2009թ. ապրիլի 22-ին հրապարակվեց Հայաստանը և Թուրքիան համատեղ հայտարարությունը, որ պատրաստ են կարգավորել երկկողմ հարաբերություններն՝ ըստ համատեղ մշակած ճանապարհային քարտեզի :[19] Հոկտեմբերի 10-ին Ցյուրիխում ստորագրվեցին հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման մասին արձանագրությունները: Չնայած արձանագրությունների տեքստում Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման կամ Ցեղասպանության ճանաչման վերաբերյալ որևէ դրույթ չկար, արձանագրությունների ստորագրումը մոտ երեք ժամով հետաձգվեց, քանի որ ստորագրմանը հաջորդող արտգործնախարարների հայտարարությունների տեքստերում կային որոշ մտքեր, որոնց համար փոխադարձ ընդունելի ձևակերպումներ չէին գտնվում: Արարողությանը ներկա ԱՄՆ պետքարտուղար Քլինթոնը և այլ դիվանագետներ անմիջապես սկսեցին հնարավոր միջոցներ ձեռնարկել՝ իրավիճակը մեղմելու համար և շուրջ երեք ժամ ուշացումով արձանագրությունները վերջապես ստորագրվեցին՝ առանց բանավոր հայտարարությունների:[20] Ինչպես հետագայում Քլինթոնը բացատրեց, «Մարդիկ ազատ են ասել ինչ ցանկանում են, սակայն թող այդ խոսքերը լինեն հենց արձանագրությունները»:[21]

---

[18] Turkey not to Open Armenia Border until Azerbaijan's Integrity Restored, *The Hurriyett Daily News,* December 4, 2008, http://www.hurriyet.com.tr/english/world/10506578.asp (12.04.2015).

[19] No: 56, April 22, 2009, Joint Statement of The Ministries of Foreign Affairs of The Republic of Turkey, The Republic of Armenia and The Swiss Federal Department of Foreign Affairs, http://www.mfa.gov.tr/no_-56_-22-april-2009_-press-release-regarding-the-turkish-armenian-relations.en.mfa (24.10.2016).

[20] **Landler M., Arsu S.,** After Hitch, Turkey and Armenia Normalize Ties, *The New York Times,* October 10, 2009, http://www.nytimes.com/2009/10/11/world/europe/11armenia.html (21.08.2016).

[21] **Ghattas K.,** Front Seat View of Clinton Diplomacy, *BBC News,* October 11, 2009, http://news.bbc.co.uk/2/hi/europe/8301191.stm (21.08.2016).

Բանակցությունների շրջանակը. շահեր և դիրքորոշումներ

Հայաստանի Հանրապետություն: Որպես դեպի ծով ելք չունեցող պետություն, Հայաստանի համար լուրջ դժվարություններ են ստեղծում փակ սահմանները: Հայաստանի համար տնտեսապես շահավետ հնարավորություններ կարող է ստեղծել Թուրքիայի հետ սահմանի բացումը: Հայաստանի Հանրապետությունից, որպես բանակցային կողմ, հայ-թուրքական հարաբերություններում այս կամ այն ձևաչափով, ներգրավված էին հետևյալ խմբերը:

ՀՀ Նախագահի աշխատակազմ

Նախագահը ներկայացնում է Հայաստանի Հանրապետությունը միջազգային հարաբերություններում, իրականացնում է արտաքին քաղաքականության ընդհանուր ղեկավարումը, կնքում է միջազգային պայմանագրեր, Ազգային ժողովի վավերացմանն է ներկայացնում միջազգային պայմանագրեր և ստորագրում դրանց վավերագրերը, նշանակում և հետ է կանչում օտարերկրյա պետություններում և միջազգային կազմակերպություններին առընթեր Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչներին և այլն:[22] Նախագահին այս հարցում օժանդակում է աշխատակազմի արտաքին կապերի վարչությունը:

Գործադիր իշխանություն

Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունը կառավարությունը մշակում և իրականացնում է Հանրապետության Նախագահի հետ համատեղ: [23]

Օրենսդիր իշխանություն (Ազգային ժողով)

Նախագահի առաջարկությամբ Ազգային ժողովը վավերացնում, կասեցնում կամ չեղյալ է հայտարարում Հայաստանի Հանրապետու-

[22] ՀՀ Սահմանադրություն, 1995, հոդված 55:
[23] Նույն տեղում, հոդված 85:

թյան միջազգային պայմանագրերը:[24] Այդ շրջանում խորհրդարանական մեծամասնությունը ներկայացնում էր Հանրապետական կուսակցությունը, որի նախագահն է ՀՀ նախագահը: Ընդդիմությունը ներկայացնում էին Հայ հեղափոխական դաշնակցությունը (ՀՅԴ) և «Ժառանգություն» կուսակցությունը, որոնք դեմ էին արձանագրությունների վավերացմանը: Ըստ Ազգային Ժողովի պատգամավոր Վահան Հովհաննիսյանի՝ արձանագրությունները կխոչընդոտեին Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը:[25]

Այլ խմբեր

Հայաստանի Հանրապետության այլ խմբերում ընդգրկված էին որոշ ընդդիմադիր ուժեր, որոնք ներկայացնում էին Հայ ազգային կոնգրեսը՝ Հայաստանի առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի գլխավորությամբ, ով խիստ քննադատություն էր հնչեցրել նման զարգացումներ նախաձեռնելու համար, ոչ այնքան հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման տեսանկյունից, որքան Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորումը՝ որպես հայ-թուրքական հաշտեցման գործընթացի հիմնական պայման լինելու տեսանկյունից:[26]

Արձանագրությունների քննադատությամբ հադես եկավ նաև ՀՀ երկրորդ նախագահի օրոք, շուրջ տասը տարի արտաքին գործերի նախարարի պաշտոնը զբաղեցրած Վարդան Օսկանյանը. «այդ փաստաթղթերի ստորագրումը չի լուծի Հայաստանի խնդիրները, ընդհակառակը, դրանք կառաջացնեն բոլորովին այլ խոչընդոտներ և նոր խնդիրներ»:[27]

[24] Նույն տեղում, հոդված 81:
[25] Armenia and Turkey Normalize Ties, October 10, 2009, *BBC News,* http://news.bbc.co.uk/2/hi/8299712.stm (21.08.2016).
[26] Armenia-Turkey Rapprochement Possible Scenarios: Levon Ter-Petrossian Speaks, *Tert.am,,* November 11, 2009, http://www.tert.am/en/news/2009/11/11/foresee/ (12.04.2015).
[27] Oskanian Rejects Armenia-Turkey Protocols, *Civilitas Foundation,* November 22, 2009, http://www.civilitasfoundation.org/cf/discussions/227-oskanian-rejects-armenia-turkey-protocols.html (12.04.2015).

Թուրքիայի Հանրապետություն: Զգտելով առավել ազդեցիկ դեր ունենալ անկայուն տարածաշրջանում, Թուրքիան շահագրգռված էր ամրապնդելու իր դիրքերը: Եվրամիությանն անդամակցելու արագացման համար իշխող «Արդարություն և Զարգացում» կուսակցությունը ձգտում էր խաղաղ բանակցային գործընթաց սկսել Կիպրոսի հետ, ավարտել հակամարտությունները արևելյան քրդաբնակ տարածաշրջաններում և կարգավորել հարաբերությունները Հայաստանի հետ՝ «Զրո խնդիր հարևանների հետ» քաղաքականություն իրագործելով:[28]

Ինչ վերաբերում է Հայաստանի հետ հարաբերություններին, ապա Թուրքիայի Հանրապետությունը, որպես կողմ, ուներ հետևյալ ենթախումբը.

Գործադիր իշխանություն

Գործադիրը ներկայացնում էն նախագահ Ա. Գյուլը և կառավարության ղեկավար, Թուրքիայի վարչապետ Ռ. Թ. Էրդողանը, ով նաև Թուրքիայի խորհրդարանում մեծամասնություն ունեցող «Արդարություն և զարգացում» կուսակցության նախագահն էր,: 2009-ին գործող Թուրքիայի սահմանադրության համաձայն, Նախագահը ներկայացնում էր պետությունը միջազգային հարաբերություններում, վավերացնում և հրապարակում էր միջազգային պայմանագրերը:[29]

Օրենսդիր իշխանություն (Մեծ Ազգային ժողով)

Թուրքիայի Սահմանադրության համաձայն, Մեծ Ազգային ժողովը, որը բաղկացած էր հինգ հարյուր հիսուն պատգամավորից, վավերացնում էր Թուրքիայի Հանրապետության անունից օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ կնքված պայմանագրերը:[30] Խորհրդարանական մեծամասնությունը ներկայացնում էր «Արդարության և զարգացում» կուսակցությունը: Ընդդիմու-

[28] Speech delivered by Consul General of the Republic of Turkey in Melbourne, Australia on the occasion of 86th Anniversary of the Republic of Turkey, Melbourne, 29 October 2009, http://melburn.bk.mfa.gov.tr/ShowSpeech.aspx?ID=152 (21.08.2016).

[29] Թուրքիայի Հանրապետության Սահմանադրություն, հոդված 104:

[30] Նույն տեղում, հոդված 90:

թյունը ներկայացնում էին «Ազգային շարժում» և «Հանրապետական ժողովրդական» կուսակցությունները, որոնք դեմ էին արձանագրություններին:[31] «Հանրապետական Ժողովրդական» կուսակցության, փոխնախագահի և նախկին դեսպան Օ. Օյմանի կարծիքով, Հայաստանը բավականաչափ չէր փոխել իր քաղաքականությունը և որևէ քայլ չէր ձեռնարկել հաշտեցում ակնկալելու համար: Նա նաև նշել էր, որ Թուրքիան անում է ամեն ինչ, ինչ պահանջում է Միացյալ Նահանգները, նույնիսկ իր արժանապատվությունը կորցնելու գնով: «Դա ոչ համապատասխան քաղաքականություն է և վնասում է Թուրքիայի հեղինակությանը: Հայաստանն այս արձանագրությունների դիմաց ոչինչ չի խոստացել, և այն, ինչ անում է Թուրքիան, միակողմանի զիջում է»[32]: Իր հերթին, «Ազգային շարժում» կուսակցության ներկայացուցիչ և նախկին դեսպան Դ. Բյուքբլբաշը հայտարարել էր. «Հայաստանի սահմանադրական օրենքները Արևելյան Թուրքիան համարում են պատմական հայկական հողերի մի մաս: Արձանագրություններում որևէ կետ չկա, որպեսզի հաստատի, որ Հայաստանը մերժում է այդ մոտեցումը: Բացի այդ, Հայաստանը չի պարտավորվում իր զորքերը դուրս բերել Լեռնային Ղարաբաղից և լուծել Թուրքիայի հետ ունեցած խնդիրները: Այսպիսով, սա միակողմանի քայլ է»:[33]

Երրորդ կողմերի հետաքրքրություններն ու դիրքորոշումները: Խնդրո առարկան վերաբերում էր նաև երրորդ կողմերին, որոնք այս կամ այն չափով ունեին իրենց հետաքրքրություններն ու դիրքորոշումները: Իհարկե, այդ կողմերը գտնվում էին Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության սահմաններից դուրս, բայց նրանց շահերն ու դիրքորոշումները չափազանց կարևոր էին երկու երկրների կառավարությունների համար՝ քաղաքական և պատմական մի շարք պատճառներով և չէին կարող անտեսվել:

---

[31] Armenia-Turkey Protocols Severely Criticized at Home, *The Hurriyett Daily News,* Septembe 1, 2009, http://www.hurriyetdailynews.com/n.php?n=armenian-turkish-protocols-targeted-by-severe-criticism-at-home-2009-09-01 (12.04.2015).

[32] Նույն տեղում:

[33] Նույն տեղում:

Հայկական սփյուռք

Արձանագրություններում որևէ նախապայման չկար Թուրքիայի կողմից պաշտոնապես Ցեղասպանության ճանաչման վերաբերյալ, մինչ դրանց վավերացումը: Սա հիմնական պատճառներից մեկն էր, որ հայկական սփյուռքը, աշխարհի տարբեր քաղաքներում ոտքի կանգնեց և իր ձայնը լսելի դարձրեց Հայաստանի իշխանություններին: Հայկական սփյուռքը կարծում էր, որ Հայաստանը շատ բան չի շահի սահմանները բացելով, իսկ 1915թ. ողբերգական իրադարձությունների մասին բանավեճի բացումը կասկածի տակ կդնի Ցեղասպանության փաստը, ինչն ինքնին աններելի դավաճանություն է: Ամերիկայի Հայ Դատի հանձնախումբը, ամենամեծ և ամենաազդեցիկ ամերիկահայ կազմակերպություններից մեկը, մտահոգություն էր հայտնել, որ Հայաստանը, որը շրջափակված է Թուրքիայի կողմից և ուժեղ տնտեսական և դիվանագիտական ճնշման տակ է գտնվում, ստիպված է ընդունել այն պայմանները, որոնք սպառնում են իր շահերին, իրավունքներին, անվտանգությանը և ապագային: Անդրադառնալով առաջարկվող պատմական հանձնաժողովին, նշվում էր, որ Անկարան երկար տարիների ընթացքում մարտավարություն էր որդեգրել Հայոց Ցեղասպանության պատմական փաստը կասկածի տակ դնելու համար, և որի նպատակն էր թուլացնել մարդկության դեմ այս հանցագործության միջազգային ճանաչման աճող գործընթացը:[34] Ըստ ԱՄՆ Հայ Դատի գրասենյակի հրապարակած հայտարարության, արձանագրությունները խաթարում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազատության և ինքնորոշման իրավունքը, հակա-դրվում են հայ ժողովրդի պատմական իրավունքներին՝ Հայոց Ցեղասպանության խնդրի արդար լուծման վերաբերյալ: Գրասենյակը կետ առ կետ վերլուծել էր Արձանագրությունների տեքստը և կարծիք էր հայտնել, որ դա Հայաստանի վրա կիրառվող ճնշման արդյունք է, որ

[34] ANCA Warns Capitol Hill about Dangers of Turkey-Armenia "Protocols"; Alerts Legislators about Pressure on Yerevan to Accept Terms that Threaten Armenia's Security, Press Release, *Armenian National Committee of America,* https://anca.org/press-release/anca-warns-capitol-hill-about-dangers-of-turkey-armenia-protocols/ (21.01.2017).

Հայաստանը պատրաստ է գնալ «ոչ խոհեմ և ապակառուցողական» զիջումների:[35]

Ադրբեջանի Հանրապետություն

1993թ., երբ հայկական զինված ուժերը ազատագրեցին Լեռնային Ղարաբաղի տարածքի մեծ մասը, Թուրքիան փակեց Հայաստանի հետ իր սահմանն՝ ի աջակցություն Ադրբեջանի: 1993թ. Թուրքիան և Ադրբեջանը շրջափակման մեջ առան Հայաստանը՝ ստիպելով հրաժարվել Լեռնային Ղարաբաղի ժողովրդին տրամադրվող ռազմա-քաղաքական աջակցությունից: Թուրքիան հետագայում երկու նոր նախապայման առաջ քաշեց դիվանագիտական հարաբերություններ հաստատելու և շրջափակումը վերացնելու համար: Նախ, Հայաստանը պետք է ընդուներ 1921թ. պայմանագիրը՝ Քեմալական Թուրքիայի և Խորհրդային Ռուսաստանի միջև (որով սահմանվել են ներկայիս պետական սահմանները) և Հայաստանը պետք է դադարեցներ Հայոց Ցեղասպանության միջազգային ճանաչման համար իր պայքարը: Թուրքիայի կառավարությունը խոստացել էր Ադրբեջանին, որ հայ-թուրքական սահմանը չի վերաբացվի այնքան ժամանակ, քանի դեռ Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը կարգավորված չէ, իսկ հայկական զորքերը դուրս չեն բերվել Լեռնային Ղարաբաղի տարածքներից: Այդուհանդերձ, գործնականում թուրքական կողմը բանակցությունների ժամանակ այս հարցը մի կողմ դրեց, դիտարկելով այն որպես զուգահեռ գործընթաց, որը պետք է շարունակեին վարել ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները:

Երրորդ կողմերի շահերն ու դիրքորոշումները: Հայ-թուրքական բանակցություններում ներգրավված էին մի շարք այլ շահագրգիռ կողմեր, որոնց շահերը, ընկալումներն ու դիրքորոշումները անդրադարձան ինչպես հիմնական կողմերի վարքագծի, այնպես էլ բանակցային գործընթացի արդյունքի վրա:

[35] Նույն տեղում:

Շվեյցարիան՝ որպես պաշտոնական միջնորդ

Որպես չեզոք պետություն, Շվեյցարիան կողմերից ստացել էր մանդատ՝ օգնելու նրանց համաձայնության գալուն, ինչը թույլ կտար հարևաններին կարգավորել բարդ հարաբերությունները: Այնուամենայնիվ, թուրքական մամուլում բավականին լուրջ մտահոգություն կար Շվեյցարիայի ընտրության հարցի վերաբերյալ, քանի որ չեզոքության սկզբունքը հայտարարելով, այդուհանդերձ Շվեյցարիային այն երկրներից էր, որը պաշտոնապես ճանաչել էր Հայոց Ցեղասպանությունը:[36] Թուրքական կողմը մտավախություն ուներ, որ բանակցային գործընթացի ժամանակ միջնորդ դառնալով, Շվեյցարիան, ամենայն հավանականությամբ, պետք է իր պատկերացումներով ու շահերով առաջնորդվի: Այդուհանդերձ, որոշ վերլուծաբաններ նշում են, որ Շվեյցարիան հայտարարվել է որպես պաշտոնական միջնորդ, սակայն ի սկզբանե ոչ մի շոշափելի դերակատարություն չի ունեցել այս գործընթացում և Ցյուրիխում էլ արձանագրությունների ստորագրման արարողությունը ցույց տվեց, որ ԱՄՆ և Ռուսաստանն են առավել մեծ ներդրում ունեցել հայ-թուրքական բանակցային գործընթացում: Չնայած արարողակարգի երեք ժամվա ձգձգմանը, Թուրքիան և Հայաստանը ստորագրեցին երկու արձանագրություններ, երբ ԱՄՆ պետքարտուղար Քլինթոնը իր «բջջային հեռախոսային դիվանագիտությունն» օգտագործեց, ինչը լայնորեն լուսաբանվեց միջազգային մամուլում:[37] Ռուսական «Կոմերսանտ» թերթը իրավիճակի փրկության համար դափնիները հանձնեց Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Լավրովին, ով կարճ գրություն էր ուղարկել Հայաստանի արտաքին գործերի նախարարին՝ «Էդուարդ, համաձայնվիր արարողությանն առանց հաջորդող հայտարարությունների»:[38]

---

[36] Turkey Rewards Switzerland by Giving the Role of Mediation, *The Hurriyett Daily News,* October 21, 2009, http://www.hurriyetdailynews.com/n.php?n=turkey-rewards-switzerland-by-giving-the-role-of-mediation-2009-10-21 (12.04.2015).

[37] **Ghattas K.,** նշվ. աշխ.:

[38] Armeniya i Turtsiya dogovorilis' molcha, po sovetu Sergeya Lavrova, *Kommersant Daily*, October 12, 2009 (In Russian) http://www.kommersant.ru/doc-rss.aspx?DocsID=1254378 (21.08.2016).

Ինչ վերաբերում է Շվեյցարիայի դերակատարությանը՝ վերջին րոպեին տեղի ունեցած երեք ժամանոց հետաձգման առումով, ապա թուրքական լրատվամիջոցները տարերայնորեն մեջբերում էին թուրք դիվանագետի խոսքերը, ով հայտարարել էր, թե Շվեյցարիայի արտգործնախարարը երեք ժամվա ընթացքում այնպես էր այս ու այն կողմ վազվզում, կարծես երրորդ քարտուղար լիներ:[39] Ստորագրման արարողության միջադեպից կարելի է ենթադրել, որ Շվեյցարիայի դերը զուտ «միջնորդի» էր,[40] որտեղ միջնորդն, ըստ էության, շահեր չուներ և հետաքրքրված էր բացառապես խնդրի լուծմամբ: Շվեյցարիան, որպես պաշտոնական միջնորդ, ներգրավված էր ավելի շատ որպես բանակցությունների տեխնիկական կազմակերպիչ, կիրառելով Թուվալի և Զարթմանի[41] առաջարկած առաջին և երկրորդ ռազմավարություններն՝ ապահովելով կապն ու ձևակերպումը, իսկ մանիպուլյացիայի ռազմավարությունը թողնված էր ԱՄՆ-ին և Ռուսաստանին:

ԱՄՆ՝ որպես գլոբալ գերտերություն

Չնայած այն հանգամանքին, որ ԱՄՆ-ն դաշնակցային հարաբերություններ ունի Թուրքիայի հետ, այդուհանդերձ երկկողմ հարաբերությունները բազմիցս լարվել են ԱՄՆ Կոնգրեսում Հայոց Ցեղասպանությունը ճանաչող բանաձևերի նախագծերի պատճառով, որի համար լուրջ լոբբիստական աշխատանք են կատարել ԱՄՆ հայկական կազմակերպությունները: Նախագահ Բարաք Օբաման իր քարոզարշավի ընթացքում տրված խոստումը դրժելով, ապրիլի 24-ի իր ամենամյա ուղերձում խուսափեց իրավական հստակ գնահատական տալ երևույթին և չօգտագործեց «Ցեղասպանություն» եզրույթը: Դրա փոխարեն նա օգտագործեց «Մեծ եղեռն» արտահայտությունը: Միաժամանակ, հաշվի առնելով առկա զարգացումներն ու Հայաստանի և Թուրքիայի միջև ընթացող բանակցային գործընթացը,

---

[39] Nalbandian Signed Deal at Lavrov's Insistence, *Today's Zaman With Wires,* October 13, 2009, http://www.todayszaman.com/tz-web/news-189734-report-nalbandian-signed-deal-at-lavrovs-insistence.html (11.07.2015).

[40] **Touval S., Zartman I.W. (eds.),** International Mediation in Theory and Practice, SAIS Papers in International Affairs, Boulder Westview Press, 1985, pp 11-13.

[41] Նույն տեղում:

Օբաման լեգիտիմ արդարացում գտավ, որպեսզի հայկական սփյուռքի զայրույթը մեղմի, որը արդարացիորեն պահանջում էր 1915թ. իրադարձությունների վերաբերյալ հստակ դիրքորոշում արտահայտել: Սա լավագույն հղումն էր, որ Օբաման կարող էր անել իր նախընտրական խոստումը դրժելու համար: Բացի այդ, ԱՄՆ-ին ձեռնտու էր առավել կայուն տարածաշրջան ունենալը՝ սահմանափակ ռուսական ներկայությամբ և ազդեցությամբ, քանի որ այդպիսով նա իր Եվրոպական դաշնակիցների համար կարող էր ապահովել այլընտրանքային էներգետիկ երթուղիներ:

Ռուսաստանը՝ որպես տարածաշրջանային գերտերություն

Ռուսաստանը նույնպես կարող էր շահող դուրս գալ հայ-թուրքական հաշտեցման արդյունքում: 2008թ. օգոստոսին Ռուսաստանի և Վրաստանի ռազմական բախումից հետո, հայ-թուրքական սահմանի բացումը Մոսկվայի և Անկարայի համար տնտեսության և անվտանգության տեսանկյունից կարող էր գրավիչ թվալ: Արձանագրությունների ստորագրումը կօգներ Ռուսաստանին ստանալ Թուրքիայի աջակցությունը էներգետիկ մի շարք նախագծերի համար և թուլացնել ԱՄՆ-Թուրքիա կապերը: Միաժամանակ, արձանագրությունների ստորագրմամբ Ռուսաստանի ազդեցությունը Ադրբեջանի վրա կմեծանար, հետևաբար նաև կմեծանար ազդեցությունը «Հարավային Հոսք» և «Նաբուկո» նախագծերի վրա[42]: Արձանագրությունները ստորագրելուց անմիջապես հետո Ադրբեջանը տվել էր իր համաձայնությունը 2010թ. ի վեր Ռուսաստանին տարեկան 500 միլիոն խորանարդ մետր գազ վաճառելու վերաբերյալ, Իսկ Ալիևը նաև հայտարարել էր՝ գազիծավալները «վերին շեմ չեն ունենա»:[43] Այսպիսով, Ռուսաստան-Թուրքիա-Հայաստան հարաբերությունների

[42] **Torosyan T., Arshakyan G.,** Geopolitical Aspect of Russian-Turkish Relations: Rivalry or Cooperation? *Armenian Journal of Political Science,* 2017, 1, 5-27.
[43] **Whitmore A. B.,** Azerbaijan Could Scuttle Nabucco Over Turkey-Armenian Deal, *Global policy Forum,* October 19, 2009, http://www.globalpolicy.org/component/content/article/198-natural-resources/48323-azerbaijan-could-scuttle-nabucco-over-turkey-armenia-deal-.html (10.12.2016).

զարգացումը կարող էր Ադրբեջանի համար առավել կախյալ վիճակ ստեղծել Ռուսաստանից, թուլացնել ԱՄՆ-ի հովանավորյալ Վրաստանի ազդեցությունը տարածաշրջանում, թուլացնել ԵՄ էներգետիկ դիվերսիֆիկացման ծրագրերը և Թուրքիայի և Արևմուտքի հարաբերությունները առավել խոցելի կդարձներ:

Կարևոր հանգամանք էր նաև այն փաստը, որ Թուրքիան ռուս-վրացական ճգնաժամի ընթացքում որոշ աջակցություն ցուցաբերեց Ռուսաստանին: Թուրքիան ցույց տվեց, որ չի ցանկանում ընդգծված հակառուսական դիրքորոշում որդեգրել՝ ի տարբերություն իր Արևմտյան դաշնակիցների, ինչը չափազանց կարևոր էր երկու պետությունների հարաբերությունների համար:[44] Այսպիսով, զարգացող առևտրային գործընկերությունից բացի, երկու երկրների միջև քաղաքական փոխըմբռնումը նույնպես արագ էր զարգանում, ամրապնդվելով Մոսկվայում և Անկարայում Ռուսաստանի և Թուրքիայի ղեկավարների բազմաթիվ հանդիպումներով: Էներգետիկ համագործակցության համատեքստում Ռուսաստանը արձանագրությունների արդյունքները կարող էր գնահատել որպես երկուստեք հաղթական վիճակ: Չնայած ձևականորեն վրացական կառավարությունը ողջունել էր արձանագրությունների ստորագրումը, այդուհանդերձ Վրաստանի կարգավիճակը, որպես Հայաստանի տրանսպորտային հաղորդակցության ուղիների մոնոպոլիստ, կխաթարվեր, եթե սահմանը բացվեր: Միաժամանակ Վրաստանի կարևորությունը, որպես էներգետիկ կամուրջ և մեծ տերությունների ուշադրության կենտրոնում գտնվող պետություն, կարող էր նվազել, հատկապես եթե Հայաստանին ու Ադրբեջանին նույնպես հաջողվեր համաձայնության գալ Լեռնային Ղարաբաղի հարցի շուրջ և հարաբերությունները բարելավել:

Ակնհայտ է, որ հայ-թուրքական հաշտեցման գործընթացը ԱՄՆ-ի և Ռուսաստանի համար դարձել էր շահերի համադրման կետ: Փաստ էր, որ հայ-թուրքական շփումները հասել էին այնպիսի մակարդակի, երբ Զարտմանի ձևակերպած՝ կոնֆլիկտների լուծման պայմանների

[44]**Torosyan T., Arshakyan G.,** Turkey's Modern Foreign Policy: New Challenges and New Opportunities, *Armenian Journal of Political Science,* 2017, 1, 73-90.

համաձայն «պահը հասունացել էր միջնորդության համար»:[45] Ինչպես արձանա27գրում է բանակցություններին և միջնորդությանը նվիրված մասնագիտական գրականությունը, վաղաժամ կամ ուշացած միջնորդությունները հազիվ թե արդյունավետ լինեն:[46] Ուսումնասիրողների մեծամասնությունը համաձայն է, որ միջնորդության համար ընտրվող ժամկետը չափազանց կարևոր գործոն է, որը ազդում է հաջողության հասնելու հնարավորությունների վրա: Հակամարտություններն, ինչպես մյուս բոլոր սոցիալական գործընթացներն, ունեն իրենց շրջափուլերը: Կա պահ, երբ հակամարտությունը «հասունանում է»[47] և գալիս է համապատասխան պահը բանակցելու համար և կա պահ, երբ միջնորդությունը կարող է միայն վատթարացնել իրավիճակը և վնասել միջնորդների նկատմամբ վստահությանը:[48] Միջնորդություն նախաձեռնելու որոշման լավագույն կողմնորոշիչը «փոխադարձաբար կործանարար կենսակերպի» առկայությունն է[49], որը հաճախ ստեղծվում է ռազմական կորուստների կամ իշխանափոխության արդյունքում, ինչպես տեղի ունեցավ հայ-թուրքական հարաբերություններում: Ինչպես նաև այն դեպքերում, երբ տարածաշրջանում ուժերի վերադասավորան արդյունքում կողմերը հայտնվում են այնպիսի անելանելի իրավիճակում, որտեղ ուժերի դասավորությունը պահպանելու հնարավորությունը շարունակաբար նվազում է:

Բանակցվող համաձայնության լավագույն այլընտրանքը (BATNA) կողմերի համար. հետաքրքրություններ և հնարավորություններ

1993թ. ի վեր Հայաստանն իր չորս հարևաններից երկուսի կողմից ենթարկվում է տնտեսական մեկուսացման: Թուրքիայի հետ առևտուր,

---

[45] **Zartman I. W.,** Ripe for Resolution: Conflict and Intervention in Africa, Oxford University Press, 1989.

[46] **Bercovitch J.,** Mediation in International Conflict: An Overview of Theory, A Review of Practice, *Zartman I.W., Rasmussen J.L. (eds.), Peacemaking in International Conflict: Methods and Techniques,* Washington DC: United States Institute of Peace Press, pp. 125-154, 1997.

[47] **Haas R. N.,** Conflicts Unending. New Haven, Conn., Yale University Press, 1990.

[48] Նույն տեղում:

[49] **Zartman I.W.,** The Timing of Peace Initiatives: Hurting Stalemates and Ripe Moments, *The Global Review of Ethnopolitics*, **1,** 1, 8-18, Septrember 2001.

իհարկե, կա, սակայն դա արվում է միջնորդված, Վրաստանի տարածքով: Իսկ 2008թ. օգոստոսին վրաց-ռուսական հակամարտության հետևանքով կապի խզումն աշխարհի հետ ցույց տվեց, թե Հայաստանը որքան զգայուն կարող է լինել տարածաշրջանում ցանկացած անկայունության դրսևորման արդյունքում: Խնդիրն այն էր, որ Ռուսաստանից եկող ապրանքներն այլևս չէին կարողանում հասնել Հայաստան և դրա վառ օրինակներից մեկը վառելիքն էր: Չնայած բոլոր տնտեսական և աշխարհաքաղաքական սահմանափակումներին, Հայաստանի տնտեսության ծանր վիճակը որոշ չափով մեղմվել է իր խոշոր սփյուռքի շնորհիվ: Ընդունված է կարծել, որ Սփյուռքը Հայաստանի տնտեսական, սոցիալական և քաղաքական զարգացման հիմնական ռեսուրսներից մեկն է:[50]

Այնուամենայնիվ, որոշ քաղաքական նրբություններ կան, որոնք նույնպես պետք է հաշվի առնել, հասկանալու համար Հայաստանի կառավարության ձգտումը հարաբերությունների կարգավորմանը՝ հաշվի առնելով բոլոր հակասություններն ու բարդությունները: 2008թ. Արևմուտքը կտրուկ քննադատեց Հայաստանի նախագահական ընտրությունները, երբ ընդդիմադիր ցուցարարների և ոստիկանության միջև բախումներ տեղի ունեցան, ինչի արդյունքում զոհեր եղան երկու կողմից էլ: Չնայած Սերժ Սարգսյանը դեռ չեր զբաղեցրել նախագահի պաշտոնը, երբ այդ բախումները տեղի ունեցան, այդուհանդերձ արտաքին քաղաքականության մեջ հաջողություններ արձանագրելու համար կարևոր էր ժողովրդի վստահությունը մեծացնելը: Միաժամանակ, արտաքին աշխարհում վստահություն շահելու համար անհրաժեշտ էին որոշ նախաձեռնություններ՝ ուղղված տնտեսության զարգացմանն ու առևտրային հարաբերությունների խթանմանը: Բացի այդ, ԵՄ-ն և ԱՄՆ-ն մշտապես ճնշում էին գործադրում՝ Թուրքիայի

[50] **Minoian V., Freinkman L.,** Diaspora' s Contribution to Armenia's Economic Development: What Drives the First Movers and How their Efforts Could be Scaled Up? *Washington DC: The World Bank,* http://documents.worldbank.org/curated/en/301351468206660466/pdf/393810AM0Diasporas0contribution01PUBLIC1.pdf (11.07.2016).

հետ հարաբերությունները կարգավորելու համար, իսկ 2008թ. Ռուսաստանը նույնպես միացավ այդ «ակումբին»: Հայաստանի համար Թուրքիայի հետ բանակցվող համաձայնագրի լավագույն այլընտրանքը (BATNA)[51] շարունակում էր մնալ ապավինումն իրանական և վրացական ճանապարհներին՝ որպես տրանսպորտային հիմնական ուղիներ, ինչը ենթադրում էր արտաքին առևտրի առավել մեծ ծախսեր: Իսկ 2008-2009թթ. Հայաստանը տուժում էր ոչ միայն տրանսպորտային փոխադրումների բարձր արժեքից, այլև Իրանի փաստացի շրջափակումից և Վրաստանի շուրջ տեղի ունեցող իրադարձությունների հետևանքով ստեղծված քաղաքական անորոշությունից: Իրավիճակը չափազանց բարդ էր ռուս-վրացական հակամարտության, ինչպես նաև ԱՄՆ-Իրան հարաբերությունների պատճառով:

Թուրքիայի հետ համաձայնության չգալը նշանակում էր մեկուսացում տարածաշրջանի էներգետիկ և տրանսպորտային նախաձեռնություններից, որոնք շրջանցում էին Հայաստանը, իսկ Ադրբեջանի տնտեսությունն ու ռազմական բյուջեն, ընդհակառակը, շարունակում էին աճել և գերազանցել Հայաստանի հնարավորությունները: Նման իրավիճակն, ամենայն հավանականությամբ, կհանգեցներ Լեռնային Ղարաբաղի հակամարտության սրման, հնարավոր է պատերազմի վերսկսման, ինչը Հայաստանի համար կարող էր առավել բարդ իրավիճակ ստեղծել՝ հաշվի առնելով ռեսուրսների անհամաչափությունը: Մյուս կողմից, եթե հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը հապաղեր, ապա հնարավոր էր, որ հայկական լոբբիստական կազմակերպությունները հաջողության հասնեին ԱՄՆ Կոնգրեսում՝ Ցեղասպանության մասին բանաձև ընդունելու հարցում և ավելի ուժեղ ճնշում գործադրեին Թուրքիայի վրա: Թուրքիայի համար քաղաքական նկատառումներն առաջնային էին Հայաստանի հետ գործակցության հարցում: Հայաստանի հետ հաշտեցման քաղաքականություն վարելով՝ Թուրքիան հույս կունենար, որ Եվրամիությունը դա հաշվի կառնի Թուրքիայի՝ ԵՄ անդամակցության ծրագրերի հարցում: Եվրամիությունը պահանջում էր, որ սահմանային

[51] **Fisher R., Ury W.,** Getting to Yes: Negotiating Agreement Without Giving In, New York: Penguin Books, 1983, pp. 100-103.

հակամարտություններն իր անդամ-պետությունների միջև վերացվեն, իսկ Եվրամիության շատ անդամներ նույնիսկ պահանջում էին Թուրքիայից՝ ճանաչել 1915թ. կատարվածը որպես Ցեղասպանություն: Դրանցից զատ, որոշակի տնտեսական օգուտներ էլ կային, որոնք Թուրքիան, ամենայն հավանականությամբ, կստանար Հայաստանի հետ բաց սահմանից, այդ թվում՝ առևտրի աճող ծավալներից և հայաստանցի զբոսաշրջիկներից, ովքեր կցանականային Թուրքիա այցելել իրենց նախնիների հայրենի բնակավայրերը: Այսպիսով, Թուրքիայի համար BATNA-ն հարաբերությունների չհաստատումն էր և ԵՄ անդամ դառնալու համար այլ եղանակների փնտրտուքը: Օրինակ կարող էր լինել ԵՄ դիրքորոշումը ինչ-որ կերպ մեղմելը, թերևս այլ հակամարտությունները մեղմելու միջոցով, օրինակ՝ Կիպրոսի կամ քրդական հարցի շուրջ: Այդուհանդերձ, Թուրքիայի վրա կշարունակ-վեին ճնշումները Հայոց ցեղասպանության ճանաչման հարցում, հատկապես եթե ԱՄՆ Կոնգրեսը ընդուներ Ցեղասպանության ճանաչման բանաձև: Մյուս կողմից, Ադրբեջանը բազմիցս զգուշացրել էր Թուրքիային, որ եթե մինչև ղարաբաղյան հիմնախնդրի կարգավո-րումն Անկարան կարգավորի իր հարաբերությունները Երևանի հետ, ապա Ադրբեջանը կթանկացնի Թուրքիայի համար ադրբեջանական գազի գինը, որը երկար տարիների ընթացքում վաճառվում էր շուկայական գնի շուրջ մեկ երրորդի արժեքով: Ընտրելով Հայաստանի հետ հարաբերությունները չբարելավելու ճանապարհը, Թուրքիան կշարունակեր վայելել Ադրբեջանի հետ եղած «եղբայրության բոլոր օգուտները», պահպանելով «մեկ ազգ, երկու պետություն» հարաբերու-թյունների մակարդակը:

Կողմերի դիրքերը հնարավոր համաձայնության գոտում (ZOPA): Ստորև ներկայացված աղյուսակը ցույց է տալիս կողմերի համար հնարավոր համաձայնության գոտին, որը սահմանվում է ըստ կողմերի ճկունության, չափում է յուրաքանչյուր կողմի պատրաստակամու-թյունը որոշակի հարցի շուրջ բանակցելու տեսանկյունից: Պրուիտի կարծիքով, հակամարտությունների առանձին դրվագներում, եթե հարաբերությունները փխրուն են, կա հնարավորություն ամրապնդելու

ճկունությունը:[52] Ճկուն դիրքերորոշումները տեղադրվում են կենտրոնական սյունակում՝ ցույց տալով ավելի մեծ համաձայնությունը:

Աղյուսակ 1

Հայկական սփյուռքի և հայկական ազգայնակ. դիրքորոշ.	**Հայաստանի կառավարության դիրքորոշումը**	**Թուրքիայի կառավարության դիրքորոշումը**		**Ադրբեջանի և Թուրքիայի ազգայնակ. ընդդիմութ. դիրքորոշ.**
Միջազգային հանրության և Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչում, արդարության վերականգնում և Արևմտյան Հայաստանի հողերի վերադարձ	Սահմանի բացում առանց նախապայմանների	Դիվանագի. հարաբեր. հաստատում, ընդհանուր սահմանի բացում, երկխոսութ. նախաձեռ., ներառյալ պատմական հարթության երկխոսութ.	Երկկողմ հարաբերությունների նորմալացում, պատմաբան. հանձնաժող. ստեղծում, դարաբաղյան հիմնախնդրի կարգավորման գործընթացի համաչափեցում	Հայկական զորքերի դուրսբերում Լեռնային Ղարաբաղից, տարածքների վերադարձ, Հրաժարում Ցեղասպան. հատուցման պահանջներից
Թուրքիայի կառավարության ճկունություն չկա	**Թուրքիայի կառավարության ճկունութ.**	**Ճկուն «ZOPA»**	**Հայաստանի կառավարության կողմից մասնակի ճկունություն**	**Հայաստանի կառավարության կողմից ճկունություն չկա**

Կառուցողական երկիմաստությունը՝ որպես միջնորդության սկզբունք

«Կառուցողական երկիմաստություն» եզրույթը հաճախ վերագրվում է 1973 արաբ-իսրայելյան պատերազմից հետո Հենրի Քիսինջերի

[52] **Pruitt D. G.,** Flexibility in Conflict Episodes, *The Annals of the American Academy of Political and Social Science,* **542**, 1, 100-115, 1995.

գործունեությանը՝[53] որպես բանակցային մարտավարություն, որն օգտագործվում է անհամաձայնությունների կամ զգայուն հարցերի «քողարկման», որոշ քաղաքական նպատակներ առաջ բերելու, այդ թվում բանակցություններին մասնակցող անձանց դեմքը փրկելու համար: Հակասությունների դեպքում գիտակցաբար օգտագործելով լեզվական անորոշությունը, կառուցողական երկիմաստությունը թույլ է տալիս տրամագծորեն հակադիր կողմերին վիճաբանել պայմանագրի շուրջ, կամ դիրքորոշումները տարբեր ձևերով մեկնաբանել: Բանակցությունների ընթացքում կառուցողական երկիմաստությունը կարող է օգտագործվել ոչ միայն հարցի լուծման անհնարինությունը քողարկելու համար, որից կողմերը հեռու են մնում, այլ նաև այն դեպքերում, երբ յուրաքանչյուրը պնդում է, որ դիմացի կողմից որոշակի զիջումներ է կորզել: Այսպիսով, դիվանագիտության մեջ օգտագործվում են այնպիսի ձևակերպումներ, որոնք թույլ են տալիս ձեռք բերել որոշ պայմանավորվածություններ, նույնիսկ այն դեպքերում, երբ բանակցությունների ընթացքում կողմերը չեն կարող համաձայնության գալ:Ըստ Դ. Պեհարի,

> «Եթե երկու կողմերն ունեն ընդգծված հակասական շահեր, և եթե թվում է, որ ոչ մի կողմը պատրաստ չէ հրաժարվել իր՝ առավելագույնը ստանալու պահանջից և/կամ եթե բանակցությունների համար չկա բավականաչափ ժամանակ, և կողմերը չեն կարող քննարկել նման զիջումներն ավելի մանրամասն, ապա հակասող շահերը կարելի է լուծել՝ խնդիրը ոչ հստակ ներկայացնելու միջոցով: Միջնորդները կարող են կիրառել մի բանաձև, որը կարող է առնվազն երկու տարբեր մեկնաբանություն ունենալ, կամ որը կարող է կրել առնվազն երկու իմաստ, որոնցից մեկը կբխի «Ա» կողմի շահերից, իսկ մյուսը՝ «Բ» կողմի: Երկիմաստությունը կարող է օգնել, որպեսզի կողմերը պահպանեն իրենց սեփական անհատական ընկալումները «թե ինչն է ճիշտ» և մյուս կողմից, ընդունել

[53] **Klieman A.,** Constructive Ambiguity in Middle East Peace-Making, Tel Aviv University, 1999, http://www.foreignaffairs.com/articles/55552/l-carl-brown/constructive-ambiguity-in-middle-east-peace-making (21.08.2016).

մեկ ընդհանուր լեզու, որը երկու կողմերն էլ կարող են հավասարապես օգտագործել իրենց շահերից ելնելով»:[54]

Ոմանք նշում են, որ պայմանագրի կամ համաձայնության մեջ երկիմաստ ձևակերպումը խնդիրն, իհարկե չի լուծում, այլ պարզապես մի կողմ է դնում այն, մինչև առավել հարմար պահը: Ըստ Սքոթի,[55] երկիմաստությունը սովորաբար օգտագործվում է այն դեպքերում, երբ կողմերը ձգտում են խուսափել պարտավորություններից: Այն կարող է օգտագործվել, օրինակ, այն պայմանագրերում, որոնցով կողմերից մեկը ցանկանում է օգտագործել երկիմաստությունը և հետագայում դատարանում հստակ մարտավարություն որդեգրելով՝ խուսափել երկիմաստ դրույթների կատարումից:

Երկիմաստություն կիրառվում է առավելապես հաշտեցման համաձայնագրերում: Այդ համաձայնագրերում այս մարտավարության կիրառումը բերում է միայն ժամանակավոր գոհունակություն, ինչն ըստ Պեհարի[56] խաբուսիկ է, քանի որ երկու կողմերն էլ ունեն երկիմաստություններն իրենց ձևերով մեկնաբանելու հնարավորություն, ինչը վաղ թե ուշ ավարտվելու է: Դա է պատճառը, որ համաձայնագրերը կարող են արագ հանգեցնել տարաձայնությունների և նման համաձայնագրերի իրականացումն, ամենայն հավանականությամբ, ձախողվելու է: Այնուամենայնիվ, Պեհարը նաև մի շարք գործոններ է բերում՝ արդարացնելով երկիմաստության օգտագործումը, չնայած այն հանգամանքին, որ երկիմաստ ձևակերպումները վտանգավոր են: Նախ, եթե երկիմաստությունը օգնում է զալ համաձայնության և խուսափել պատերազմից, կամ ատելության սերմանումից, ապա այն պետք է դիտարկվի որպես դրական երևույթ: Այսինքն, նույնիսկ եթե երկիմաստ դրույթը հետագայում կարող է կարծիքների բախումներ առաջացնել, այն փաստը, որ ֆիզիկական բախումներից ինչ-որ կերպ հնարավոր է եղել խուսափել, ինքնին ձեռքբերում է:[57] Երկրորդ՝ երկիմաստությունը պարունակում է համագործակցության

---

[54] **Pehar D.,** Use of Ambiguities in Peace Agreements, *Language and Diplomacy*, Malta: DiploFoundation, 2001.

[55] **Scott N.,** Ambiguity vs. Precision: The Changing Role of Terminology in Conference Diplomacy, *Language and Diplomacy,* Malta: DiploFoundation, 2001.

[56] **Pehar D.,** նշվ. աշխ.:

[57] Նույն տեղում:

մեծ ներուժ: Այն հանգեցնում է հետագա հակամարտության միայն այն ժամանակ, երբ կողմերը պնդում են երկիմաստ դրույթի վերաբերյալ իրենց միակողմանի մեկնաբանությունը և այդ դրույթի այլ մեկնաբանություն չեն ընդունում:[58] Երրորդ՝ եթե դրանք կանխատեսելի են դարձնում հակասությունների մեկնաբանումը: Համաձայնության եկած կողմերը չնայած կշարունակեն քաղաքական պայքարը նույնիսկ պայմանագիրը կնքելուց հետո, այնուամենայնիվ, այդ գործընթացը կլինի ավելի նուրբ, ավելի կանոնակարգված և կանխատեսելի, եթե նախապես պարզ է, որ ընդունված տեքստի դրույթները կհանգեցնեն կարծիքների կամ մեկնաբանությունների բախումների:[59]

Երկիմաստության հետևանքներն, ամենայն հավանականությամբ, բացասական են, եթե օգտագործվում են խաղաղության կնքման պայմանագրերում, և դրանց երկիմաստության օգտագործումը՝ որպես միջնորդական գործիք կարող է հիմնավորվել, եթե այն ծառայում է կողմերի միջև երկխոսության սկսման նպատակին՝ նախկինում տեղի ունեցած դեպքերի վերաբերյալ, այլ ոչ թե միտված են ապագային:[60]

Միայն երկիմաստությունն, իհարկե բավարար չէ հետագա հարաբերությունների շուրջ ընդհանուր համաձայնության գալու համար, սակայն դա հնարավորություն է տալիս որոշ քայլեր ձեռնարկել՝ անցյալի իրադարձությունների և անհամաձայնությունների առկայության դեպքում առաջ շարժվելու համար: Հայ-թուրքական բանակցությունների միջնորդներն այդ գործիքի օգտագործմամբ հնարավորություն տվեցին փաստաթղթում առավել զգայուն հարցերին չանդրադառնալ (Հայոց ցեղասպանության ճանաչում և Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորում) և կողմերին՝ փրկելու իրենց դեմքը: Միջնորդների այս ընտրությունը կողմերին օգնեց համաձայնության գալ տեքստի վերաբերյալ: Բանակցային և միջնորդական ջանքերն ազդել էին Երևանի և Անկարայի միջև քաղաքական դիսկուրսի զարգացման վրա, ինչը հանգեցրել էր ավելի մեղմ հայտարարությունների: Հայ-թուրքական հարաբերություններում երկիմաս-

[58] Նույն տեղում:
[59] Նույն տեղում:
[60] **Donaghy B.,** Constructive Ambiguity In Neighbour – Neighbour Mediation, October 2008, http://www.mediate.com/articles/donaghyB3.cfm (21.08.2016).

տություն օգտագործելու ռազմավարական նպատակն էր ստեղծել նոր քաղաքական դիսկուրս, որը տարածաշրջանում կարող էր ձևավորել նոր քաղաքական իրողություն: Անշուշտ, միջնորդների ընտրած ռազմավարությունը որոշ վտանգներ էր առաջացնում պայմանագրի հետագա իրականացման տեսանկյունից, եթե կողմերը չկարողանային փոխադարձաբար ընդունելի մեկնաբություններ գտնել: Փոխզիջման անհնարինությունը վտանգի տակ էր դնում արձանագրությունների վավերացման հեռանկարները և դրանց հաջող իրականացումը ապագայում, եթե միջնորդները պարզություն չեն բերում երրորդ՝ առավել հավասարակշռված մեկնաբանության տրամադրման միջոցով: Այդուհանդերձ երկիմաստության գործիքի կիրառումը ծառայեց տարածաշրջանում նոր քաղաքական իրողությունների ձևավորման ռազմավարական նպատակին, հնարավոր համաձայնության գոտիներն ավելի նեղացնելու և տարբեր BATNA-ների համար:

2009-2010թթ. հայ-թուրքական հարաբերություններում արագ զարգացումների նկատմամբ մեծ ուշադրություն դրսևորվեց: Եղան դատապարտումներ և արդարացումներ, ինչպես նաև ողջ աշխարհի լրատվամիջոցների կողմից գործընթացը մանրամասն լուսաբանվեց: Երկու պետությունների խորհրդարաններում վավերացվման հեռանկարից անկախ, հայ-թուրքական արձանագրությունները լուրջ դերակատարում ունեցան տարածաշրջանում նոր իրողությունների ձևավորման գործում, երկու երկրների հարաբերություններին վերաբերող հարցերի շուրջ համաշխարհային մամուլում լայն քննարկման նախաձեռնությամբ: Տարբեր ԶԼՄ-ների անդրադառնալը խնդրին տարբեր ազդեցություն էր ունենում՝ խնդրի կարգավորման անխուսափելիությունից մինչ երկու երկրների միջև առկա խնդրի էությանն անդրադառնալը: Հայոց Ցեղասպանության, Թուրքիայի քրեական օրենսգրքի 301-րդ հոդվածի և Լեռնային Ղարաբաղի հակամարտությանը վերաբերող զգայուն հարցերը լուսաբանելով, լրատվամիջոցները բարձրացրել էին այդ խնդիրների վերաբերյալ ընկալումը՝ դրանք նոր մակարդակի հասցնելով և ձևավորելով ու սահմանելով նոր հանրային՝ ինչպես ներքին, այնպես էլ միջազգային օրակարգ: Գլոբալ ուժերի միջնորդությամբ հայ-թուրքական նախաձեռնությունն ազդեցություն ունեցավ կողմերի, ինչպես նաև

հասարակության կողմից ընկալումների վրա, այդ թվում՝ խնդրի էության վերաբերյալ: Նաև, թե որոնք են հակասության պատճառները, որոնք են ներգրավված կողմերը և թե ինչպես են ներկայացված խնդիրները: Ըստ Լևիցկու, վիճահարույց հայեցակարգերի շրջանակների կառուցվածքն ազդում է կողմերի վարքագծի, ռազմավարության և մարտավարության ընտրության վրա, ուստի չպետք է անտեսվի:[61] Համաշխարհային մամուլն ու միջազգային հանրությունն այդ տարիներին ուշադիր հետևում էին հայ-թուրքական հարաբերությունների զարգացումներին և Հայաստանն ու Թուրքիան, ավելի քան երբևէ, պետք է զգույշ լինեին ոչ միայն իրենց ներքին, այլև ընդհանրապես միջազգային հանրության կողմից ընկալումների տեսանկյունից: Սա Հայաստանի և Թուրքիայի համար որոշակի սահմանափակումներ էր ստեղծում հետ-ցյուրիխյան BATNA-ների նկատմամբ:

Լավագույն այլընտրանքների ձևավորում ըստ խաղերի տեսության

Ցյուրիխյան արձանագրություններից հետո Հայաստանի և Թուրքիայի կառավարությունների հարաբերություններում BATNA-ների փոփոխության մոդելավորման և խաղերի տեսության կիրառման հարցում ստեղծվել էր մի իրավիճակ, որտեղ կողմերի փոխկախվածությունը կարևոր նշանակություն ունի արդյունքների հասնելու հարցում: Խաղերի տեսության կիրառումը բազմաթիվ կողմերի ներգրավվածության դեպքում արդյունավետ է, երբ կողմերը փոխադարձ կախվածությամբ հանդերձ բանակցությունների միջոցով շահագրգռված են ստանալու առավելագույնը և յուրաքանչյուր կողմ կախվածություն ունի ոչ միայն իր սեփական գործողություններից, այլ նաև անցյալում կամ ապագայում մյուս կողմի գործողություններից:[62]

«Ռազմավարական փոխհամաձայնության» համատեքստում Հայաստանի և Թուրքիայի կառավարությունների միջև գործընթացը կարելի է բաժանել 4 հիմնական տարրերի՝

[61] **Lewicki R. J., et al.,** Essentials of Negotiation, Boston, Mass: Irwin/McGraw-Hill, 2001.
[62] **Mas-Colell A., et al,** Microeconomic Theory, Oxford University Press, USA, 1995.

- խաղացողներ,
- ռազմավարություններ,
- արդյունքներ և
- դրանց դիմաց կատարված որոշակի «վճար»:

Մասնակիցներին կարելի է նկարագրել որպես «ո՞վ է ներգրավված», ռազմավարությունը՝ «ո՞վ է գործողություն կատարում, ի՞նչ գիտեն մասնակիցները, ե՞րբ են նրանք գործողություն կատարում, և՝ ի՞նչ կարող է անել յուրաքանչյուր մասնակից»:

Արդյունքները սահմանում են մասնակիցները որպես՝

- «հնարավոր գործողությունների շարք»,
- «ո՞րն է խաղի արդյունքը»,
- «ի՞նչ դրա դիմաց վճարեցին մասնակիցները» և
- «նրանց ակնկալիքները հնարավոր արդյունքներից»[63]:

Խաղի դասավորությունը՝

Խաղացողներ՝

1. Հայաստանի Հանրապետության կառավարություն,
2. Թուրքիայի կառավարություն:

Խաղացողների ռազմավարություն՝

1. արձանագրությունների վավերացում,
2. արձանագրությունների չվավերացում:

Արդյունքները՝ կախված ռազմավարության ընտրությունից.

1. Սահմանների բացում, եթե երկու խորհրդարանները վավերացնեն արձանագրությունները:

2. Անցում հանգուցալուծման նոր փուլի, եթե երկու կողմերը չկարողանան վավերացնել արձանագրությունները:

3. Եթե միայն թուրքական խորհրդարանը չվավերացնի արձանագրությունները, ապա դա կդիտվի որպես ոչ բարեկամական քայլ, ինչը կարող է բերել Եվրամիությանն անդամակցելու անհնարինությանը և հայկական սփյուռքի ձեռքում առավել մեծ շանս՝ ԱՄՆ Կոնգրեսում Հայոց ցեղասպանության բանաձևի ընդունման համար:

4. Եթե միայն Հայաստանի խորհրդարանը չկարողանա վավերացնել արձանագրությունները, Հայաստանը կվաստակի ագրեսիվ պետության համբավ, որը չցանկացավ կարգավորել

[63] Նույն տեղում:

հարաբերությունները հարևանների հետ: Դա հավանաբար կխթանի սփյուռքի հետ կապերը, որը կշարունակի առաջ մղել Ցեղասպանության ճանաչման հարցը: Այնուամենայնիվ Հայաստանը միջազգային հանրության աչքերում որոշակիորեն կկորցնի իր հեղինակությունը և կարող է թուլանան դիրքերը Լեռնային Ղարաբաղի հարցում: Ի՞նչ են վճարում խաղացողները:

Յուրաքանչյուր խաղացողի ակնկալիքները կարելի է ներկայացնել հետևյալ կերպ. «1»՝ առավելագույն նախընտրելի արդյունք, «0»՝ երկրորդ, «-1»՝ երրորդ, և «-2» նվազագույն նախընտրելի արդյունք:

Աղյուսակ 2-ը բերված են յուրաքանչյուր կողմի ընտրության հնարավորությունները՝ համապատասխան արդյունքների և դրանց դիմաց որոշակի վճարի մասին, եթե երկու երկրների խորհրդարաններում վավերացումը տեղի է ունենում միաժամանակ:

Աղյուսակ 2

Իրավիճակ, երբ կողմերը գործում են միաժամանակ	**Թուրքիան վավերացնում է արձանագրությունները**	**Թուրքիան չի վավերացնում արձանագրությունները**
Հայաստանը վավերացնում է արձանագրությունները	Բացվում է սահմանը, հարաբերությունները կարգավորվում են: Սկսվում է երկխոսություն: Զայրանում են սփյուռքը և Ադրբեջանը: Payoff: 0; 0	Թուրքիան համարվում է անբարեխիղճ պետություն: Ցեղասպանության ճանաչման վտանգ և ԵՄ անդամակցության գործ. դադարեցում: Payoff: 1;-2
Հայաստանը չի վավերացնում արձանագրությունները	Հայաստանը դիտվում է անբարեխիղճ պետություն: Լեռնային Ղարաբաղի վտանգը: Payoff: -2; 1	Նոր փորձնական շրջափուլ: Payoff: -1; -1

Եթե արձանագրությունների վավերացումը երկու երկրներում էլ տեղի ունենար միաժամանակ, ապա ողջամիտ էր ակնկալել, որ

Հայաստանը նախընտրում է, որ սահմանը բացվի առանց շտապողականության: Թուրքիան նախընտրում է ստորագրել արձանագրությունները, որպեսզի ցույց տա իր բարի կամքը, բայց նախընտրում է, որ Հայաստանը թուլացնի սեփական դիրքերը Լեռնային Ղարաբաղի հարցում, քան ԱՄՆ-ը ճանաչի Հայոց Ցեղասպանությունը: Այնուամենայնիվ, հաշվի առնելով երկու երկրների ազգային շահերը, խելամիտ է ենթադրել, որ երկուսն էլ գերադասում են «լավ երևալ» միջազգային հանրության աչքում և նպաստել իրենց օրակարգի առաջ մղմանը: Այսինքն, եթե Թուրքիան չի վավերացնում արձանագրությունները, ապա Հայաստանը միջազգային հանրության համար առավել համակրելի է դառնում, քան Թուրքիան, հետևաբար, Հայաստանի համար նախընտրելի է իրադարձությունների զարգացման այս սցենարը: Իսկ Թուրքիան առավել նախընտրելի իրավիճակում է հայտնվում, եթե Հայաստանը չի վավերացնում արձանագրությունները: Այսպիսով, երկու կողմերի համար էլ ցանկալի ռազմավարությունը պետք է լիներ արձանագրությունների վավերացումը:

Ստորև ներկայացված աղյուսակները ցույց են տալիս խաղացողների հնարավոր ընտրությունները և դրանցից բխող արդյունքները՝ կախված, թե ով կանի առաջին քայլը:

Աղյուսակ 3

Նախ վավերացնում է Հայաստանը	**Թուրքիան վավերաց. է արձանագրությունները**	**Թուրքիան չի վավերաց. արձանագրությունները**
Հայաստանը վավերացնում է արձանագրությունները	Բացվում են սահման., հարաբերությունները կարգավորվում են: Երկխոս. է սկսվում, դժգոհ են սփյուռքը և Ադրբեջանը: խաղից դուրս իրավիճակ: 1; 1	Հայաստանը դիտվում է «ազնիվ խաղացող»: Կա ներքին խռովության սրման վտանգ: խաղից դուրս իրավիճակ: -2;-1
Հայաստանը չի վավերացնում արձանագրությունները	Թուրքիան դիտվում է «ազնիվ խաղացող»: Կա ներքին խռովության սրման վտանգ: խաղից դուրս իրավիճակ: -1; -2	Նոր փորձնական շրջափուլ: խաղից դուրս իրավիճակ: 0;0

Եթե արձանագրությունների վավերացումը տեղի է ունեցել սկզբում Հայաստանում, ապա ողջամիտ է ակնկալել, որ Հայաստանը նախընտրում է սահմանը բացել: Այնուամենայնիվ, քանի որ վավերացման գործընթացը տեղի է ունենում հաջորդաբար, երբ առաջին կողմի ընտրած քայլը հայտնի է դառնում երկրորդ կողմին՝ նախքան քայլ անելը, ապա պարզ է, որ առաջինի կողմից վավերացնելուց հետո չվավերացնող կողմը չի կարող միջազգային հանրության կողմից ակնկալել գնահատանք: Իսկ երկրորդ կողմի վավերացումը կդիտվի որպես Արևմուտքին հաճոյանալու փորձ՝ ամենայն հավանականությամբ գրգռելով ներքին խռովության ալիքի: Իսկ եթե Հայաստանը չվավերացնի արձանագրությունները, ապա Թուրքիան միջազգային հանրության համար ավելի նախընտրելի արդյունք կարձանագրի:

Աղյուսակ 4

Նախ վավերացնում է Թուրքիան	**Թուրքիան վավերացնում է արձանագրությունները**	**Թուրքիան չի վավերացնում արձանագրությունները**
Հայաստանը վավերացնում է արձանագրությունները	Հարաբերությունները կարգավորվում են: Երկխոսություն, դժգոհ են սփյուռքը և Ադրբեջանը: Խաղից դուրս իրավիճակ: 1; 1	Հայաստանը դիտվում է «ազնիվ խաղացող»: Ներքին խռովության վտանգ: Խաղից դուրս իրավիճակ: -2;-1
Հայաստանը չի վավերացնում արձանագրությունները	Թուրքիան դիտվում է «ազնիվ խաղացող»: Ներքին խռովության վտանգ: Խաղից դուրս իրավիճակ: -1; -2	Նոր փորձնական շրջափուլը: Խաղից դուրս իրավիճակ: 0;0

Եթե արձանագրությունների վավերացումը տեղի է ունենում նախ Թուրքիայում, ապա ողջամիտ կլինի ակնկալել, որ Թուրքիան նախընտրում է սահմանը բացել, քան նոր բանակցությունների ցիկլ սկսել: Սակայն, քանի որ վավերացման գործընթացը տեղի է ունենում

հաջորդաբար, երբ առաջին կողմի ընտրությունը հայտնի է դառնում երկրորդ կողմին՝ նախքան քայլ կատարելը, ապա պարզ է, որ արձանագրությունները երկրորդը վավերացնող կողմի քայլը կդիտարկվի որպես Արևմուտքին հաճոյանալու փորձ: Սա չի նպաստի միջազգային հանրության աչքերում այդ երկրի իմիջի բարելավմանը և հավանաբար կհանգեցնի ներքին խռովության նոր ալիքի: Այսինքն, եթե Թուրքիան չվավերացնի արձանագրությունները, ապա Հայաստանն առավել նախընտրելի արդյունք կունենա: Եթե արձանագրությունները պետք է հերթականությամբ վավերացվեն, ապա կողմերի համար առավել գերիշխող ռազմավարությունը կլինի առաջինը վավերացնել արձանագրությունները: Սակայն 2009թ. ապրիլին վարչապետ Էրդողանը հայտարարեց, որ Թուրքիան Հայաստանի հետ վերջնական համաձայնագիր չի ստորագրի «քանի դեռ Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ համաձայնություն ձեռք չի բերվել»:[64] Պարզ դարձավ, որ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման այս փուլը ևս վերջնական արդյունքի տեսակետից անարդյունավետ է, սակայն ցանկալի է ունենալ ավելի մանրամասն գնահատում գործընթացի և դրա թեկուզ միջանկյալ արդյունքների վերաբերյալ:

Եզրակացություն

Միջնորդների ռազմավարությունը հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացում կողմերին քայլ առ քայլ միմյանց մոտեցնելու սկզբունքն էր: Արձանագրություններում երկիմաստության օգտագործմամբ միջնորդները կողմերին առաջարկեցին, ստորագրման համար ընդունելի տեքստ: Դա նաև հնարավորություն ընձեռեց առանց անցյալի իրադարձություններին անդրադառնալու առաջ շարժվել՝ կողմերին դեպի «Այո» ուղղորդելու հարցում՝[65] միջնորդները հնարավոր համաձայնության գոտիներն էին նեղացնում և կողմերի BATNA-ները անընդհատ փոխում էին յուրաքանչյուր ձեռք բերված նոր պայմանավորվածությամբ: Երկիմաստությունը նպաստեց կողմերի միջև «ֆիզիկական» թշնամանքից անցում կատարել դեպի

[64] Armenia-Turkey: The Great…. նշվ. աշխ.:
[65] **Fisher R., Ury W.,** Opt. Cit.

«բանավոր» հակամարտության հարթություն, ինչը գործընթացը դարձրեց առավել կանխատեսելի: Այնուամենայնիվ, միջնորդների դերակատարությունը հետարձանագրային փուլում առավել կարևոր էր, քանի որ միջնորդներից ակնկալվում էր կողմերին պարզություն, հստակություն, երկուստեք ընդունելի մեկնաբանություն տրամադրել արձանագրություններում օգտագործված երկիմաստ դրույթների վերաբերյալ: Դրանով միջնորդները պետք է հաշվի առնեն այն ընդհանուր կանոնը, որ «երկիմաստությունը ենթադրում է չափավորություն»:[66]

The Use of Ambiguity in Mediated Agreements: The Armenian-Turkish Protocols

SUREN SARGSYAN
The Fletcher School of Law and Diplomacy, Tufts University, USA

The purpose of this paper is to study the concept of ambiguity in diplomatic language within the context of third-party mediated agreements, focusing on the case of Armenian-Turkish relations. The paper will study how the diplomatic language has evolved over the course of modern negotiation history between the Republic of Turkey and Republic of Armenia as reflected in bilateral talks and official statements since 1992 and finalized in the Swiss-mediated protocols on the establishment and development of diplomatic relations signed on October 10, 2009. In particular, the paper will look at ways in which mediators used ambiguity as a tool to reconcile interests through one-text procedure, and the promises and perils ambiguity engenders if used for several incompatible interpretations in future. The paper will start with a brief historical overview highlighting the development of the Armenian-Turkish relations starting from the first years of Armenia's independence, identifying the parties to the conflicts the two states have been involved in – both primary and secondary. The paper will then discuss how evolution in the diplomatic language has affected the ZOPAs for the parties, focusing on the role of the new language in shaping new political and geopolitical realities in the region.

[66] **Schneider A. K., Honeyman C. (eds),** The Negotiator's Fieldbook: The Desk Reference For The Experienced Negotiator, Washington, DC: American Bar Association, p. 464, 2006.